ՆԱԽԱԳԻԾ

Սեպտեմբեր 2025թ.

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 110-րդ հոդվածներով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած թիվ 8 նիստի թիվ 30 արձանագրությունը և Սասուն Լիպարիտի Հակոբյանի դիմումը՝ համաձայն որի անչափահաս Մելինա Համլետի Հակոբյանը (ծնված՝ 2008 թվականի ապրիլի 08-ին, ծննդյան վկայական թիվ ԱԲ 588428) իր ծնողների՝ Մարիանա Պյոտրի Հակոբյանի (մահացած՝ 2024 թվականի հունվարի 18-ին, մահվան վկայական թիվ III-ԴՀ 728982) և Համլետ Լիպարիտի Հակոբյանի (մահացած՝ 2025 թվականի օգոստոսի 23-ին, մահվան վկայական թիվ ԲԲ 037440) մահից հետո մնացել է առանց ծնողական խնամքի՝ **որոշում եմ.**

1. Անչափահաս Մելինա Համլետի Հակոբյանին (ծնված՝ 2008 թվականի ապրիլի 08-ին, ծննդյան վկայական թիվ ԱԲ 588428) վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ երեխայի ծննդյան վկայականի, անձնական քարտի, մոր և հոր մահվան վկայականների լուսապատճենները և մեկ լուսանկար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1. Համայնքի ղեկավարի տեղակալ
2. Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իրավաբանական բաժին
3. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության, սոցիալական աջակցության և տուրիզմի բաժին